ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Տ. Լաճիկյանի (լիազորագիր, տրված՝ 03.05.2019թ.)

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝

Ա. Դիլանյանի (լիազորագիր, տրված՝ 03.05.2019թ.)

քննելով ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար բեռնատար մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2019թ. ներկայացված (30.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/18 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի ապրիլի 16-ին բեռնատար մեքենաների ձեռքբերման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի միակ մասնակից է հանդիսացել «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերությանը հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընկերությունը համաձայն չէ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշման հետ և գտնում է, որ այն հիմնավորված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2019թ. թիվ 2 արձանագրության 9.1 կետով որոշում է կայացրել Ընկերությանը 29.04.2019թ. ժամը 11:00-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցություններ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որը սահմանում է, որ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե առաջարկված նվազագույն գները հավասար են կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մանսակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Տվյալ պարագայում առկա չէ վերը թվարկված հիմքերից և ոչ մեկը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ որևէ նշում չկա, թե ինչ գին է եղել գնման հայտով սահմանված գնման առարկայի համար, մինչդեռ Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում նախագահողը նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Նկարագրված դեպքում խախտվել է Օրենքի նշված պահանջը, քանի որ Պատվիրատուի կողմից 11.04.2019թ. հաստատած գնումների պլանում Ընթացակարգի շրջանակներում գնվելիք բեռնատարների համար սահմանված արժեքը եղել է 8 000 000 ՀՀ դրամ, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացվել է 7 800 000 Հհ դրամ գնային առաջարկ: Ակնհայտ է, որ Ընկերության կողմից ներկայացված գումարը չի գերազանցում Պատվիրատուի գնման պլանով նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության 9.1 կետով կայացված որոշումը:

Ի լրումն բողոքի Ընկերությունը ներկայացրել է գրություն, որով կրկին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել՝

1. Պարտավերեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը.

2. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության 9.1 կետով, թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշումները.

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.05.2019թ. թիվ 26-372 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը, համաձայն Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության, 16.04.2019թ. ներկայացրել է գնման հայտ, որով սահմանված է եղել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, պահանջվող քանակը և միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը՝ 6,5 մլն. ՀՀ դրամ: Պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացվել է շուկայի ուսումնասիրություն և պարզ է դարձել, որ գնման պլանով հաստատված տվյալ ապրանքի միավորի գինը՝ 8 մլն. ՀՀ դրամ, բարձր է շուկայական գներից:

Հայտ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարարող միակ մասնակցին՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին, Պատվիրատուն 29.04.2019թ. հրավիրել է գնի նվազեցման շուրջ բանակցությունների՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի: Բանակցությունների համար սահմանված օրը «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացուցիչ չի ներկայացել և նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշում է կայացրել, հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին,

Ընկերության ներկայացրած գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից վերջինիս կարիքների համար հայտարարվել է «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որպես գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած միակ մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի 9.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին Ընկերության ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 03.05.2019թ. թիվ 26-372 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ www.gnumner.am կայքում հրապարակված 2019թ թվականի գնումների պլանը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա», «բ» և «զ» պարբերությունների համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից վերջինիս կարիքների համար 4 հատ բեռնատար մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Համաձայն www.gnumner.am տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի գնումների պլանի՝ գնման առարկա բեռնատարների համար սահմանվել է 8 000 000 ՀՀ դրամ միավորի գին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած միակ մասնակիցը հանդիսացել է «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն, որի հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 31 200 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որպես գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած միակ մասնակից:

Նույն արձանագրության 9-րդ կետի 9.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին Ընկերության ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը:

Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է պատասխանատու ստորաբաժանման կողմից 16.04.2019թ. հաստատած գնման հայտը, որի համաձայն՝ բեռնատար մեքենայի մեկ միավորի նախահաշվային գինը սահմանվել է

6 500 000 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն, որի հետ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, պետք է վարվեին բանակցություններ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է, որ գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունները վարվում են, եթե առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ***գնման հայտով սահմանված գինը:***

Նույն կետի «զ» պարբերությունը սահմանում է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ***եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը,*** կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Ուսումնասիրելով Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման 16.04.2019թ. հաստատած գնման հայտով բեռնատար մեքենայի մեկ միավորի համար սահմանված նախահաշվային գինը, արձանագրում եմ, որ այն չի համապատասխանում Օրենքով սահմանված կարգով հաստատված և տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի 2019 թվականի գնումների պլանում ներառված գնման առարկայի համար նախատեսված գնին: Մասնավորապես գնման պլանով մեկ միավորի համար նախատեսվել է 8 000 000 ՀՀ դրամ, մինչդեռ գնման հայտով՝ 6 500 000 ՀՀ դրամ: Նման պայմաններում հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանն է, ուստի գնման պլանում ներառված գինը հանդիսանում է հիմք նաև հետագայում գնման հայտում մեկ միավորի ձեռքբերման

համար առավելագույն գին սահմանելիս: Ընդ որում՝ արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգը հայտարարելու օրվա դրությամբ www.gnumner.am տեղեկագրում հրապարակված չէ սույն գնման առարկայի մասով Պատվիրատուի գնումների պլանի փոփոխություն:

Այսպիսով՝ չնայած այն հանգամքանքին, որ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը գերազանցել է Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատած գնման հայտով նախատեսված գինը, այնուամենայնիվ Ընկերության գնային առաջարկը ***չի գերազանցել գնումների պլանով նախատեսված գնման առարկայի համար սահմանված գինը:***

Դրա հետ մեկտեղ, արձանագրում եմ նաև, որ 23.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 8.1 ենթակետով «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որպես գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած միակ մասնակից, իսկ 9-րդ կետի 9.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

Այսպիսով, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության հիման վրա մերժելով «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ: Ուստի գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է մասնակի բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 29.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշումը.

2. Պարտավորեցնել «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

3. «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 9.1 կետով կայացված որոշումը դադարեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ